ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԶԱՏՅԱՆ ՇԱՎԱՐՇ ԽԱՉԻԿԻ

V–VIII ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ՍՐԲԱԽՈՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2021

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մարգարյան Հայրապետ Գևորգի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Շիրինյան Էռնա-Մանեա Սերգեյի

պատմական գիտությունների թեկնածու
Մելքոնյան Արմինե Մուշեղի

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2021 թ. դեկտեմբերի 17-ին, ժամը 14^{00} ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. նոյեմբերի 5-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, պ.գ.թ., դոցենտ Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայոց պատմության վաղմիջնադարյան շրջանը մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Այն մի պատմափուլ է, երբ հայ ժողովրդի կյանքում տեղի են ունեցել մի շարք վճռորոշ իրադարձություններ՝ քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն, պետականության կորուստը, արաբական ավերիչ արշավանքները և դրանց հետևանքով Հայաստանի վիճակի վատթարացումը: Չնայած օտար տիրապետությունների հաստատմանը, Հայաստանի մշակութային, քաղաքական վերնախավերը կարողացել են առկա մարտահրավերներին համապատասխան լուծումներ գտնել: Արդյունքում ստեղծվել են հայոց գրերը, իսկ որոշ ժամանակ անց իրենց կենսունակությունը պահպանած հայ նախարարական տներին հաջողվել է թոթափել արաբական տիրապետությունը և Բագրատունիների գլխավորությամբ վերականգնել հայկական թագավորությունը:

Հայ ժողովրդի մշակութային պայքարը, որը գլխավորում էր հոգևորականությունը, մեծապես հենվում էր Սուրբ գրքի, իսկ հետո նաև առանձին դավանաբանական երկերի վրա: Կրոնադավանաբանական պայքարի ոլորտում էին նաև սրբախոսական երկերը: Վերջիններս հյուսվում էին որևէ քրիստոնյա նահատակի կամ նշանավոր հոգևորականի գովերգելու համար: Արդյունքում ստեղծվում էր իդեալականացված հերոս, որը հաճախ հեռու էի իրական նախատիպից: Այնուամենայնիվ, սրբախոսական երկերը շատ հաճախ արտացոլում էին սրբախոսի ապրած ժամանակը, վերջինիս հատուկ տրամադրությունները, գաղափարներն ու ձգտումները:

Փաստորեն սրբախոսական երկերն իրենց ժամանակի հասարակության յուրահատուկ հայելիներն են, որոնք երբեմն բացահայտում են ավելի խորքային երևույթներ քան կարելի է սպասել: Սրբախոսական երկերի պատմագիտական արժեքը չգերագնահատելով հանդերձ, պետք է նշել, որ դրանցում բարձրացված հարցերը (օրինակ՝ անհատի և բազմության հակադրության թեման, երևակայության և առօրեականության պատմությանը վերաբերող հարցերը և այլն), առավել ևս դրանց ուսումնասիրությունն ունեն հասարակագիտական նշանակություն: Անցյալ շրջանի հասարակական կառույցի ուսումնասիրությունը հիանալի հնարավորությունը է ներկայի հետ համեմատական եզրեր տանելու, զուգահեռներն ու տարբերությունները հասկանալու տեսանկյունից: Նման համեմատությունն ուղենշային կարող է դառնալ մերօրյա հասարակագետների համար:

Սրբախոսական երկերի հաղորդած տվյալներն ինքնուրույն աղբյուրագիտական արժեք ունենալուց զատ, մեծ նյութ են հաղորդում հնագետներին, քաղաքական ու տնտեսական պատմությամբ զբաղվող մասնագետներին: Փաստորեն դրանք հաճախ օժանդակ նյութ են պատմության այլ գիտաճյուղերի և նույնիսկ արվեստագիտության կամ մշակութաբանության արդի ուսումնասիրության համար:

Ատենախոսության առարկան, նպատակներն ու խնդիրները: Հեռավոր անցյալի և նրա սկզբնաղբյուրների հետազոտությունը կարևոր է պատմագրության ներքին կապերը բացահատելու տեսանկյունից: Հայտնի է, որ ներկա մտածողությունը և իրադարձությունները մեծապես բխել են անցյալից և ինչ որ չափով նրա շարունակությունն են:

Հայ սրբախոսական գրականությունը հայոց եկեղեցու գաղափարական ու դավանաբանական պայքարի կարևոր զենքերից է եղել: Նման իրողությունն ուսումնասիրողներին ստիպում է զգուշությամբ մոտենալ սրբախոսական երկերին, դրանցում ներառված տվյալները համեմատել ժամանակամերձ այլ աղբյուրների հետ և տարբերություններն ու համընկնումները պարզելուց հետո, խոսել դրանց պատմագիտական արժեքի մասին:

Ներկա աշխատանքը ներքոնշյալ խնդիրներն ուսումնասիրելու նպատակադրումն ունի.

- սրբերին նվիրված վարքերից ու վկայաբանություններից փնտրել և գտնել աղբյուրագիտական տեղեկությունները,
- պատմագիտական արժեք ունեցող նյութը համեմատել այլ սկզբնաղբյուրների հետ,
- առկա տեղեկությունները դասակարգել առանձին թեմաներով և ստանալ պատմագիտական փաստարկներ՝ չսահմանափակվելով զուտ քաղաքական կամ տնտեսական պատմությունը ներկայացնելով,
- սրբախոսական երկերում ավանդված տեղեկություններն ուսումնասիրել նաև առօրեականության պատմության համատեքստում,
- քննել սրբախոսական երկերում առկա խորհրդանշանները, դրանց իմաստաբանությունը և կապը ժամանակի գաղափարախոսության ու դավանաբանության հետ:

Ժամանակագրական շրջանակները: Ընտրված սրբախոսական երկերը վերաբերում են վաղ միջնադարին՝ մասնավորապես V-ից մինչև VIII դարի սկիզբն ընդգրկող ժամանակաշրջանին: Կերպափոխություններով հարուստ այս շրջանում, սրբախոսական երկերն իրենց էջերում ամբարել են յուրահատուկ տեղեկություններ, որոնք մեծ արժեք են նաև այսօր:

Գիտական նորույթն ու գործնական նշանակությունը: Առաջին անգամ համակարգված տեսքով անդրադարձ է կատարվել վաղմիջնադարյան սրբախոսական գրականության պատմագիտական արժեքին: Հայկական վարքերն ու վկայաբանությունները համեմատության մեջ են դրվել լատիներեն, հունարեն, ասորերեն, վրացերեն նմանատիպ երկերի հետ, բացահայտվել են հայ սրբախոսների մտապատկերը կերտող հիմնական գրվածքները: Արդյունքում հնարավոր է դարձել ուրվագծել հայ սրբախոսական գրականության հարացույցը: Հենց վերջինս էլ հնարավորություն է տվել պատմագիտական ուսումնասիրության ենթարկել սրբախոսական երկերը և գտնել դրանցում առկա արժեքավոր նյութերը:

Նման հարացույց-մոդելն այն կարևոր գիտական ու գործնական նորույթն է, որն ապագա ուսումնասիրողներին կհուշի, թե ինչ «գործիքներով» մոտենալ սրբախոսական երկերին, ինչպես արժևորել դրանցում ընդգրկված պատմագիտական երկերը և հասնել ամբողջական պատկերի ձևավորմանը:

Գիտական ուսումնասիրվածության աստիճանը և աղբյուրագիտական հիմքը: Սրբախոսական երկերի ընտրության համար հիմք են ծառայել մի քանի կարևոր հանգամանքներ: Նախ՝ դրանց ուսումնասիրության աստիճանը: Ընտրվել են այն երկերը, որոնք ավելի քիչ են հայտնվել հայագետների տեսադաշտում: Փորձել ենք շեշտը դնել այն գրվածքների վրա, որոնցում չափազանցությունները սակավ են, իսկ պատմագիտական տեղեկությունները հարուստ: Հաշվի ենք առել նաև ժամանակագրական սահմանները՝

ընտրվել են Հայաստանում քրիստոնեության սկզբնավորումից մինչև արաբների արշավանքները լուսաբանող երկերը. Եդեսիայի Աբգար արքայի և Թադեոս առաքյալի աշակերտներ համարվող Ոսկյանների սրբախոսական զրույցները, վերջիններիս հետ կապված Սուքիասյանների վկայաբանությունը, Հայաստանում Սասանյան տիրապետության ժամանակներն արտացոլող Շուշանիկի և Հիզտբուզիտի, արաբական արշավանքների առաջին տարիներին վերաբերող Դավիթ Դվնեցու վկայաբանությունները:

Միևնույն ժամանակ անդրադարձել ենք Կորյունի «Մաշտոցի վարք»-ին, Ագաթանգեղոսի «Գրիգոր Լուսավորչի վարք»-ին, Եղիշեի «Վարդանանց պատմությանը», Ատոմյանների, Գրիգոր Մանաճիհրի, վրաց սրբախոսությունից հայտնի Եվստաթիոսի, Աբո Թբիլիսեցու վկայաբանություններին, Կոստանդիանոս Մեծի տեսիլքին, ասորական ու հունական սրբախոսական մի շարք երկերի, ժողովածուների և այլն: Սրբախոսական տեղեկությունները համեմատության մեջ ենք դրել հայ միջնադարյան մատենագիրների աշխատանքների հետ՝ սկսած ոսկեդարյան հեղինակներից մինչև Միքայել Չամչյանց: Աշխատանքի մեջ օգտագործվել են որոշ հնագրական նյութեր, համեմատություններ են արվել սրբախոսական խորհրդանշանների և վաղ միջնադարյան քանդակների ու բանահյուսական տվյալների միջև:

Ցավոք, մինչ օրս հայ իրականության մեջ սրբախոսական երկերի պատմագիտական նշանակության մասին համակարգված աշխատանքներ չեն կատարվել: Նախախորհրդային և հետխորհրդային տարիներին սրբախոսական երկերի ուսումնասիրությունը հիմնականում կրել է աղբյուրագիտական ու բանասիրական բնույթ: Այս գործում մեծ ավանդ են ունեցել հատկապես Մխիթարյան միաբանները: Ղևոնդ Ալիշանի, Մկրտիչ Ավգերյանի և այլոց երկարամյա ջանքերի շնորհիվ լույս են տեսել հայոց եկեղեցու, ինչպես նաև քրիստոնեական մյուս եկեղեցիների սրբերին նվիրված բազմահատոր ժողովածուներ՝ «Սոփերք Հայկականք», «Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց» և այլն[1]: Այս ժողովածուներում օգտագործվել են մեծ քանակությամբ ձեռագրեր, անտիպ նյութեր և, փաստորեն, միջնադարյան Ճառընտիրների ու Հայսմավուրքների կազմողներից հետո Մխիթարյաններն առաջինն էին, որ փորձել են դասակարգել սրբախոսական երկերը:

Սրբախոսական երկերի հրատարակության գործում կարևոր դեր են կատարել նաև Հ. Աճառյանն ու Հ. Մանաղյանը: Վերջիններիս ջանքերով լույս են տեսել հայոց նոր վկաներին նվիրված վարքերի ու վկայաբանությունների բնագրերը[2]: Ակնկալվող հայագետները չեն սահմանափակվել միայն վարքերով ու վկայաբանություններով. ներառել են նաև տապանաքարային հիշատակություններ, տեսիլներ ու հրաշքներ: Այս նույն տարիներին անապատականների և վանականության մասին մի շարք հոդվածներ է հեղինակել Հուսիկ եպիսկոպոս Մովսիսյանը[3]: Ճիշտ է, հեղինակը փորձել է հիմնավոր քննություն ներկայացնել անապատական շարժման, ինչպես նաև Ոսկյան և Սուքիասյան սրբերի մասին, սակայն սկզբնաղբյուրների քննական բնագրերի, ինչպես նաև գիտական համակարգի բացակայությունը թերի են թողել նրա հոդվածաշարը:

---

[1] Սոփերք Հայկականք, հտ. ԺԹ, Վենետիկ, 1854, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, հտ. Բ, Վենետիկ, 1811:

[2] Հայոց նոր վկաները (1155–1843), աշխ. Հ. Մանանդեանի և Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903:

[3] Մովսիսեան Յ., Անապատականներ եւ վանականութիւն, մաս Բ, Արարատ, 1905, թիվ ԼԸ, էջ 1015–1025, մաս Գ, Արարատ, 1906, ԼԹ, էջ 60–68, մաս Ե, Արարատ, 1906, ԼԹ, էջ 244–250:

Հետխորհրդային տարիներին սրբախոսական ժողովածուները կազմելու գործում անուրանալի է Եզնիկ վարդապետ Պետրոսյանի ավանդը: Վերջինս, աշխարհի տարբեր անկյուններում սփռված հայկական ձեռագրերի համեմատությամբ կազմել և հատորներով հրատարակության է ներկայացրել նախաձերեռնցյան Հայսմավուրքների համաբարբառները[4]: Հաշվի առնելով նշյալ ժողովածուների դասակարգման բարդ գործը՝ պետք է ասել, որ հետազոտողը կարևոր աշխատանք է կատարել՝ իր նպաստը բերելով սրբախոսական բնագրերի ուսումնասիրության գործին:

Հայոց վարք սրբոցի հրատարակության գործում մեծագույն ներդրում է ունեցել Ի. Աբուլաձեն: Վերջինս իր երկարամյա հետազոտություններն ամփոփել է «Հայ-վրացական գրական կապերը IX–X դդ.» աշխատության մեջ[5]: Վրացի հետազոտողն իր մեծարժեք ուսումնասիրության մեջ ներկայացրել է հայ սրբախոսական երկերի քննական բնագրերը, հետազոտել հայ-վրաց ժողովուրդների գրական կապերը, դրանց փոխազդեցություններն ու առնչությունները:

Հայ սրբախոսական գրականության բանասիրական ուսումնասիրության գործում իրենց ծանրակշիռ ավանդն են ունեցել մեծանուն բանասեր, գրականագետ Մանուկ Աբեղյանը և Մայիս Ավդալբեգյանը[6]: Նրանք հայ սրբախոսությանն անդրադարձել են հայ գրականության զարգացման ընդհանուր շղթայում՝ այն համարելով նրա զարգացման կարևոր օղակներից մեկը: Բացի այդ, Մ. Ավդալբեգյանը մենագրություն է նվիրել Հայսմավուրքների պատմագիտական արժեքին[7]՝ փորձելով ներկայացնել այս ժողովածուների զարգացման պատկերը, տարբեր խմբագրությունների միջև ընդհանուր կապերը և այլն:

Սրբախոսական բնագրերի ուսումնասիրության գործում մեծագույն ավանդ ունի Քնարիկ Տեր-Դավթյանը: Տևական ուսումնասիրությունների արդյունքում նրան հաջողվել է հայերեն ու ռուսերեն մի շարք աշխատություններում ներկայացնել հայ սրբախոսական ողջ ժառանգությունը, դրանք հասանելի դարձնել ոչ միայն գիտական համայնքին, այլ նաև հանրային լայն լսարան ապահովել: Նրա հետազոտություններում[8] բնագրերի ու դրանց թարգմանությունների կողքին առկա են արժեքավոր բանասիրական հետազոտություններ, որոնք մեծ ներդրում են սրբախոսական երկերի կառուցվածքն ու բնույթը հասկանալու տեսանկյունից:

Սրբախոսական երկերի ուսումնասիրության բնագավառում աչքի ընկնող աշխատանք է կատարել Պարույր Մուրադյանը, որը հայերեն ու վրացերեն բնագրերի ուսումնասիրության արդյունքում կազմել է Շուշանիկի վկայաբանության ամբողջական

---

[4] Համաբարբառ Յայսմաւուրք, հտ. Բ, Ս. Էջմիածին, 2009, Համաբարբառ յայսմաւուրք, հտ. Գ, Ս. Էջմիածին, 2010, Համաբարբառ յայսմաւուրք, հտ. Ը, Ս. Էջմիածին, 2010, Համաբարբառ Յայսմաւուրք, հտ. Թ, Ս. Էջմիածին, 2010:

[5] აბულაძე ი., ქართული და სომხური ლიტერატურული ურთიერთობა IX–X სს., თბ., 1944 (Աբուլաձե Ի., Վրաց-հայկական գրական կապերը IX–X դդ., Թբիլիսի, 1944):

[6] Աբեղյան Մ., Երկեր, հտ. Ա., Երևան, 1966, Ավդալբեգյան Մ., Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը (V դ.), Երևան, 1971:

[7] Ավդալբեգյան Մ., «Յայսմաւուրք» ժողովածուները և նրանց պատմագիտական արժեքը, Երևան, 1982:

[8] Տեր-Դավթյան Ք., XI–XV դդ. հայ վարքագրությունը, Երևան, 1980, նույնի՝ Աստվածաշունչն ու հայ վկայաբանական գրականությունը, Աստվածաշնչական Հայաստան (Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու), Երևան, 2005, էջ 279-284, նույնի՝ Հայկական սրբախոսություն, Երևան, 2011, Тер-Давтян К., Армянские жития и мученичества V–XVII вв., Ереван, 1994:

քննական բնագիրը[9]: Բացի այդ, Պարույր Մուրադյանը վրացերենից թարգմանել է հայ սրբախոսական երկու հուշարձաններ[10], որոնք հայերենով չեն պահպանվել: Նա նաև իրականացրել է Հայոց վարք սրբոցի թարգմանությունը վրացերենից, որը փաստորեն հայերենով չէր պահպանվել և բնօրինակը պահվում է Աթոնի նշանավոր վանքում[11]: Միևնույն ժամանակ, մեծանուն աղբյուրագետը փորձ է կատարել ուրվագծելու հայ սրբախոսական գրականության ընդհանուր պատկերը, դրա առաջացման ու զարգացման ուղիները՝ հիմնական արդյունքները ներկայացնելով առանձին հոդվածով[12]:

Խորհրդային տարիներին, երբ սրբախոսական երկերը համարվել են անհիրական, մտացածին հորինվածքներ, սակավ ուշադրություն է դարձվել դրանց պատմական տեղեկություններին: Հետխորհրդային շրջանում սրբախոսական գրականության նկատմամբ վերաբերմունքն աստիճանաբար սկսել է փոխվել՝ հիմք է դրվել դրանց պատմագիտական ուսումնասիրությանը: Այս գործի ռահվիրաներից է Վաչե Նալբանդյանը: Նա մի շարք հոդվածներ է նվիրել սրբախոսական երկերի ընդհանուր բնույթը բացահայտելուն և դասակարգելուն[13]: Ուշագրավ են նաև Գագիկ Սարգսյանի և Գոհար Կարագյոզյանի հոդվածները Բուլպաքր-Հովսեփ Դվնեցու (Նորաշենցու) վկայաբանության և Գրիգոր Պիտիվիեցու վարքի մասին[14], որոնցում հեղինակները փորձել են պարզել սրբերի դեգերումների հետ կապված տեղավայրերը, դրանցում առկա նյութի պատմականությունը և այլն: Բազմավաստակ հայագետ-բյուզանդագետ Հրաչ Բարթիկյանն իրականացրել է Եվստրատիոսի վկայաբանության համակողմանի քննությունը: Արդյունքում պարզ է դարձել, որ այս երկի հայերեն թարգմանությունն ունի աղբյուրագիտական և պատմագիտական մեծ նշանակություն[15]:

Հարկ է նշել, որ այժմ սրբախոսական երկերի պատմագիտական ուսումնասիրության նկատմամբ հետաքրքրությունն ավելի է մեծացել, և հետազոտողները մատնանշում են սրբախոսության գիտական ուսումնասիրության անհրաժեշտությունը[16]:

Սրբերի ու նրանց նվիրված երկերի հանդեպ ուշադրության արդյունք են նաև նրանց մասին գիտաժողովները և առանձին սրբերին նվիրված հոդվածների ժողովածուները[17]:

---

[9] Մուրադյան Պ., Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը, Երևան, 1996:

[10] Մուրադյան Պ., Հայերեն բնագրով չպահպանված վարքագրական երկու հուշարձան, Բանբեր մատենադարանի, 1977, թիվ 12, էջ 191-215:

[11] Մուրադյան Պ., Հայոց «Վարք սրբոց»-ի վրացական խմբագրությունը, Ս. Էջմիածին, 2008:

[12] Մուրադեան Պ., Ուրուագիծ հայոց սրբախօսական ժառանգութեան, Գանձասար, թիւ Է, 2002, էջ 87–96:

[13] Նալբանդյան Վ., Եղիշեն և վկայաբանական ժանրի ձևավորումը հայոց հին գրականության մեջ, Պատմա-բանասիրական հանդես, 1997, թիվ 1, էջ 147–160, նույնի՝ Հագիոգրաֆիական ժանրի ուսումնասիրության արդի վիճակը,Պատմա-բանասիրական հանդես, 1996, թիվ 1–2, էջ 111-116:

[14] Սարգսյան Գ., Վկայաբանությունները որպես պատմաշխարհագրական սկզբնաղբյուր, Հայոց պատմության հարցեր, 2005, հտ. 6, էջ 169-182, Карагёзян Г., Житие Св. Григория де Питивье, Вестник общественных наук, 2017, № 2, с. 163–177.

[15] Բարթիկյան Հ., Քրիստոնեությունը Փոքր Հայքում. Ազգային-կրոնական և սոցիալ-քաղաքական իրավիճակը նահանգում III դարի երկրորդ կեսին (ըստ IV դարի սրբոց վկայաբանությանց), Հայ-բյուզանդական հետազոտություններ, հտ. I, Երևան, 2002, էջ 739-779:

[16] Տէր-Վարդանեան Գ., Սրբերի մասունքների եւ սրբազան առարկաների պաշտամունքի, նրանց վերաբերող վաւերագրերի ուսումնասիրման կարեւորութիւնը, Էջմիածին, 2002, Ա, էջ 89–91:

[17] Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, 2001, էջ 21–29, Սուրբ Սարգիս (նստաշրջանի նյութեր), Երևան, 2002, էջ 24–43:

Դրանցում հայագետները փորձել են համակարգել սրբերի պաշտամունքի պատմական ընթացքը, նրանց մասին ժողովրդական պատկերացումները, պատկերագրությունը, սրբավայրերի հնագիտությունը, ճարտարապետությունը, արվեստագիտական բնույթը և այլն:

Չնայած սրբախոսական երկերին նվիրված առանձին ուսումնասիրությունները շատ չեն, հայ պատմագետներն իրենց աշխատություններում բազմիցս դիմել են սրբախոսական երկերի օգնությանը: Հատկապես կարևորվել է վարքերում ու վկայաբանություններում ընդգրկված անձանց, տեղանունների կամ տարեթվերի իսկությունը: Արդյունքում, սրբախոսական երկերի տվյալները նպաստել են մի շարք կարևոր բացահայտումներ կատարելուն: Լայն կիրառություն են ունեցել VI դ. կեսերին և VIII դ. սկզբին նահատակված Հիզտբուզիտ և Դավիթ Դվնեցի նահատակների վկայաբանությունները, որոնք տվյալներ են մատուցել Մաղաքիա Օրմանյանին[18], Արամ Տեր-Ղևոնդյանին[19], Պողոս Անանյանին[20] և այլ նշանավոր հայագետների:

Աշխատանքի տեսական մասը մեծամասամբ հիմնված է արտասահմանյան ուսումնասիրությունների վրա: Կարևոր ազդեցություն են ունեցել բոլանդիստների դպրոցի ակնառու ներկայացուցիչ Իպոլիտ Դելյեյի[21], ֆրանսիական անալների դպրոցի ներկայացուցիչներ Մարկ Բլոկի[22], Ֆերնան Բրոդելի[23], Ժակ Լը-Գոֆի[24], ֆրանսիացի նշանավոր փիլիսոփաներ, մշակութաբաններ, հոգեբաններ Գյուստավ Լը Բոնի[25], Միշել Ֆուկոյի[26] և Ժերար Ռենեյի[27], ռուս միջնադարագետներ, գրականության տեսաբաններ Միխայիլ Բախտինի[28], Ասրոն Գուրևիչի[29], Ալեքսեյ Լիդովի[30], Վադիմ Լուրիեի[31], Միխայիլ Բիբիկովի[32], սրբախոսական գրականության ամերիկացի հայտնի ուսումնասիրող Փիթեր

---

[18] Օրմանյան Մ., Ազգապատում, հտ. Ա, Սբ. Էջմիածին, 2001:

[19] Տեր Ղևոնդյան Ա., «Հայոց իշխան»-ը արաբական տիրապետության շրջանում, Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 92–106, նույնի՝ 703 թ. ապստամբությունը Հայաստանում խալիֆայության դեմ, Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 518–531, Հայոց իշխան տիտղոսի ծագումը և Հայոց տերությունը VII դարում, Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 190–197:

[20] Անանեան Պ., Պատմական յիշատակարան մը Դուիինի Բ. ժողովքի մասին, Բազմավէպ, 1957, թիվ 5–6, նույնի՝ Քննութիւն հայ եկեղեցու պատմութեան Ե եւ Զ դարերու շրջանին, Վենետիկ, 1991:

[21] Delehaye H., Les Légendes Hagiographiques, Bureuxe de la société des bollandistes, Bruxelles, 1906, նույնի՝ The Legends of the Saints, New York, 1962.

[22] Блок М., Короли-чудотворцы, М., 1998, նույնի՝ Պատմության պաշտպանական կամ պատմաբանի արհեստը, Երևան, 2018:

[23] Бродель Ф., Структуры повседневности: возможное и невозможное, М., 1986.

[24] Ле Гофф Ж., Средневековый мир воображаемого, М., 2001, Цивилизация средневекового Запада, Екатеринбург, 2005, նույնի՝ Герои и чудеса средних веков, М., 2011,

[25] Լը Բոն Գ., Ամբոխների հոգեբանությունը, Երևան, 2020:

[26] Фуко М., Забота о себе: История сексуалности, т. III, М., 1998.

[27] Рене Ж., Насилие и священное, *М.,* 2010, նույնի՝ Козел отпущения, М., 2010:

[28] Բախտին Մ., Ժամանակի և քրոնոտոպի ձևերը վեպում, Երևան, 2017:

[29] Гуревич А., Смерть *как* проблема исторической антропологии*: о* новом направлении *в* зарубежной историографии, Одиссей, 1989, *նույնի՝ Избранные труды. Культура стедневековой Европы, СПб., 2007.*

[30] Лидов А., Иеротопия. Пространственные иконы и образы-парадигмы в визанитийской культуре, М., 2009.

[31] Лурье В., Введение в критическую агиографию, СПб., 2009.

[32] Бибиков М., Историческая литература Византии, СПб., 1996.

Բրաունի աշխատությունները[33]: Նշյալ հետազոտողների ուսումնասիրությունների շնորհիվ հնարավոր է դարձել առավել խորը դիտարկել վաղ միջնադարյան հայ սրբախոսական երկերի հիշատակությունները և ավելի լայն հարթության մեջ օգտագործել դրանք:

Մեթոդաբանությունը: Սրբախոսական երկերում պատմագիտական տեղեկությունները հաճախ հանդես են գալիս քողարկված տեսքով: Հետևաբար դրանց ուսումնասիրությունը պահանջում է ընդգրկուն մոտեցում, քանզի դրանք մեկնաբանելու համար միայն գրավոր սկզբնաղբյուրները բավարար չեն: Հաճախ պետք է ավելի լայն հայացք նետել, դիմել վաղմիջնադարյան արվեստի, աստվածաբանության, ազգագրության ու հնագիտության օգնությանը և համալիր ուսումնասիրությամբ բացահայտել այս կամ այն երևույթը, այլ խոսքով՝ առաջնորդվել պատմահամեմատական մեթոդով, ինչպես նաև մասնավորից ընդհանուր սկզբունքով:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնադրույթների մի մասը փորձաքննության են անցել ՀՀ ԳԱԱ Երիտասարդ գիտաշխատողների XXXVIII, XXXX, XXXXI նստաշրջաններում, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի Երիտասարդական IV, VI գիտաժողովներում, Սեն Արևշատյանի ծննդյան 90 ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում և Ժնևի համալսարանի հայագիտության բաժանմունքի կազմակերպած երիտասարդ հետազոտողների աշխատաժողովում: Ատենախոսության նյութերի հիման վրա հրապարակվել են վեց գիտական հոդվածներ:

Ատենախոսությունը քննարկվել և երաշխավորվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի կողմից:

Աշխատանքի կառուցվածքն ու հիմնական բովանդակությունը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից:

Ներածության մեջ տրված է թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, նպատակներն ու խնդիրները, մեթոդական հենքը, ուսումնասիրվածության աստիճանն ու աղբյուրները:

Ատենախոսության առաջին գլխում՝ «***V-VI դդ. հայ սրբախոսական երկերի բնութագրական կողմերը***», ներկայացվել են վարքերի և վկայաբանությունների կառուցվածքային առանձնահատկությունները, ասորական և հունական երկերի հետ դրանց ընդհանություններն ու տարբերությունները: Պարզվում է, որ չնայած հայ սրբախոսական գրականությունը կազմավորվում էր համաբնույթ հունական և ասորական գրականության ազդեցությամբ, այնուամենայնիվ, ձևավորվում էին ինքնատիպ հատկանիշներ, որոնք արտացոլում էին վաղմիջնադարյան Հայաստանի մշակութային, հասարակական ու քաղաքական կյանքը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ սրբախոսները հերոսի ընտրության հարցում զգուշավոր լինելով՝ սահմանել էին սեռային (գենդերային) և ազգային որոշակի բաժանարարներ: VI դ. հայ սրբախոսական գրականության մեջ սկզբունքային փոփոխություն է տեղի ունեցել և օտարազգի սրբերի շարքերը համալրվել են

[33] Brown P., The Cult of the Saints, Chicago, 1981, նույնի՝ Society and the Holy in Late Antiquity, Berkeley and Los Angeles, 1982.

տիրապետող ազգությունների կերպարներով, ինչը խոսում է Հայոց եկեղեցու գաղափարական հայացքների փոխակերպման մասին:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ սրբերին վերագրվել են զինվորների, երկրագործների, անապատականների հատկանշական գծեր, որոնք ավելի մեծ ժողովրդականություն էին ապահովելու նրանց համար: Սրբերը լրացրել են քրիստոնեական եկեղեցու մերժած հեթանոսական հավատքի սպասավորների՝ կախարդների թափուր տեղը: Վերջիններս առավել կենսունակ են եղել՝ շարունակելով գոյություն ունենալ նաև վաղ միջնադարում:

Երկրորդ գլուխը՝ «***Հայաստանի և հարակից երկրների I-III դդ. պատմության արտացոլումը վաղ շրջանի սրբախոսական գրականության էջերում***», հիմնականում նվիրված է Եդեսիայի Աբգար թագավորի և Ոսկյան սրբերի սրբախոսական զրույցների և Սուքիասյանների վկայաբանական զրուցի քննությանը: Անդրադարձ է կատարվել թե երբ, որտեղ և ինչ պայմաններում են գրվել վերոնշյալ սրբախոսական երկերը, որ եպիսկոպոսական աթոռների շահերն են ներկայացրել:

Վերոնշյալ սրբախոսական գրվածքներում բազմաթիվ կարևոր տեղեկություններ են պահպանվել Հայաստանի, Եդեսիայի, Ադիաբենի, Իրանի, ալանական ցեղերի քաղաքական, ռազմական, տնտեսական պատմության մասին: Սրբախոսական ու պատմագրական երկերի համադրման արդյունքում ուշագրավ մանրամասնություններ են բացահայտվում մի շարք արքաների (Եդեսիայի Աբգար V և Աբգար VIII, Հայոց Արտաշես I, Խոսրով II/III, Սասանյան Շապուհ I և այլն), նախարարական տների մասին, որոշ բնակավայրերի ու գավառների մասին ի հայտ են գալիս եզակի տվյալներ (օրինակ՝ Վաղարշակերտ-Ալաշկերտի, Բուդնան-Բատնա նույնության մասին և այլն):

Հարկ է նշել, որ վաղ սրբախոսական գրվածքները հարուստ են խորհրդանշաններով, որոնք հիմնականում դրսևորվել են տեսիլքներում և հրաշքներում: Հայ սրբախոսները դրանք գործածել են ընդդեմ հեթանոսական հավատքի, ինչպես նաև հանուն քրիստոնեության ամրապնդման: Խորհրդանիշների լայն կիրառությունը հնարավորություն է տալիս ավելի խորը տեղեկություններ քաղել միջնադարյան մարդու մտածողության և հոգեբանության մասին:

Ավելի ուշ շրջանում ստեղծված սրբախոսական երկերի ուսումնասիրությանն է նվիրված ատենախոսության երրորդ գլուխը՝ «***Պարսկական և արաբական տիրապետության շրջանում ստեղծված սրբախոսական երկերը և դրանց պատմագիտական արժեքը***» խորագրով: Պետք է ընդգծել, որ նախորդ շրջանի սրբախոսական գրականության համեմատ այս շրջանում տեղի են ունեցել մի շարք կարևոր փոփոխություններ: Նախևառաջ սրբախոսական հերոսը փոխվել է: Սկսել են սրբացվել նաև հակառակորդ, այլադավան ժողովուրդների ներկայացուցիչներ՝ պարսիկներ, արաբներ և այլն:

Ուսումնասիրության կենտրոնում են հայտնվել պարսկական և արաբական տիրապետության ժամանակ ստեղծված Շուշանիկի, Հիզտբուզիտի, Դավիթ Դվնեցու, ինչպես նաև վրաց սրբախոսությունից հայտնի Եվստաթիոսի, Աբո Թբիլիսեցու վկայաբանությունները: Այս երկերը կարևոր նշանակություն են ունեցել օտար տիրակալների դեմ պայքարում և ոգեշնչել են ոչ միայն հայ այլ նաև ուրիշ քրիստոնյա ժողովուրդների:

Հարկ է արձանագրել, որ հայ սրբախոսական երկերում կարևորագույն տեղեկություններ են պահպանվել իրենց տիրապետության տակ գտնվող տարածքներում իրանական ու արաբական վարչաքաղաքական, կրոնական, ռազմական, իրավական քաղաքականության, ինչպես նաև իրանական մի շարք տոհմերի մասին:

Մեծարժեք են այն վկայությունները, որոնք վերաբերում են հասարակական կյանքին, հատկապես վաղմիջնադարյան դավանաբանական ու կրոնական իրականությունը պայմանավորող Դվինի Բ ժողովին: Առավել մանրամասն տեղեկություններ են պահպանվել Հայաստանում հաստատված իրանական և արաբական վարչակարգի մասին՝ ճշգրտումներ մտցնելով կառավարիչ-մարզպանների, հայոց իշխանների, հազարապետների, համարկարների, մոգպետերի կառավարման տարեթվերի, անվանումների, ինչպես նաև հաստատված բարդ հարաբերությունների հարցում:

Պարսկա-արաբական տիրապետության ժամանակաշրջանի սրբախոսական նյութերում ի հայտ են եկել սրբախոսական նոր կաղապարներ և նոր խորհրդանշաններ, որոնք արտահայտել են ժամանակաշրջանի ընկալումները, երևակայությունն ու հոգեբանությունը: Մի շարք էական հիշատակություններ գոյություն ունեն ընտանեկան-ամուսնական կանոնների, քրիստոնեական, զրադաշտական, իսլամական ծեսերի, շինությունների ներքին հարդարանքի վերաբերյալ:

Եզրակացություններ: Չնայած, հայ սրբախոսական գրականությունը կազմավորվել է հունական և ասորական գրականության ազդեցությամբ, այնուամենայնիվ, ստեղծվել են ինքնատիպ հատկանիշներ, որոնք արտացոլել են վաղ միջնադարյան Հայաստանի մշակութային, հասարակական ու քաղաքական կյանքը:

Ոսկեդարյան հայ պատմիչներն ու սրբախոսները մեծ զգուշավորություն են ցուցաբերել սրբախոսական հերոսի ընտրության հարցում: Քննությունը ցույց է տալիս, որ սրբերին վերագրվել են հին արևելյան և անտիկ պատկերացումներին բնորոշ՝ անապատականների, հեթանոսական աստվածների, քաջարի զինվորների, կախարդների և այլ հերոսների գերբնական հատկանիշներ:

Կարող ենք արձանագրել, որ վաղ շրջանի սրբախոսական երկերն աղբյուրագիտական հարուստ նյութ են պարունակել Հայաստանում քրիստոնեական առաջին համայնքների գործունեության, Հայաստանի և հարևան երկրների ռազմաքաղաքական, տնտեսական ու մշակութային պատմության մասին: Այս երկերի շնորհիվ տեղեկություններ ենք քաղում միջնադարյան մարդու մտածողության, երևակայության և հոգեբանության մասին:

Պարսկական և արաբական տիրապետությունների ժամանակաշրջանի սրբերին կերպավորելու համար սրբախոսները մեծապես օգտվել են ավետարանական տեսարաններից: Հարկ է արձանագրել, որ սրբախոսական երկերում կարևոր տեղեկություններ են պահպանվել պարսկական ու արաբական վարչաքաղաքական, կրոնական, ռազմական, իրավական քաղաքականության մասին: Պարսկա-արաբական տիրապետության շրջանում ստեղծված վկայաբանություններն ուշագրավ տվյալներ են ավանդել Հայաստանի վարչական բաժանումների և քաղաքական ու տնտեսական կյանքի մասին: Մեծարժեք են այն վկայությունները, որոնք վերաբերում են հասարակական կյանքին, հատկապես վաղմիջնադարյան դավանաբանական ու կրոնական իրականությունը պայմանավորող Դվինի Բ ժողովին:

Ատենախոսության թեմայով հեղինակի գիտական հրապարակումները

1. Ազատյան Շ.Խ., Հայ սրբախոսական գրականության որոշ առանձնահատկությունների շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2018, 3, էջ 20-31:

2. Ազատյան Շ.Խ., Աբգար թագավորի վարքաբանական զրույցը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, Ե., «Հայագիտության հարցեր», N 1 (16), 2019, էջ 3-17:

3. Ազատյան Շ.Խ., Հիզտբուզիտի վկայաբանությունը վաղմիջնադարյան սրբախոսական գրականության համատեքստում, Ե., «Հայագիտության հարցեր», N 3 (18), 2019, էջ 12-34:

4. Ազատյան Շ.Խ., Եդեսիայի Աբգար թագավորի վարքաբանական զրույցը և նրա կերպափոխությունները հայ մատենագրության մեջ, Ե., «Բանբեր Մատենադարանի», N 27, 2019, էջ 228-250:

5. Ազատյան Շ.Խ., Հիզտբուզիտի վկայաբանության պատմականությունը, Ե., «Բանբեր հայագիտության», N 3, 2019, էջ 53-73:

6. Ազատյան Շ.Խ., Ոսկյանների վկայաբանական զրույցի մատենագրական ու պատմական հենքը, Ե., «Բանբեր Մատենադարանի», N 29, 2020, էջ 126-146:

АЗАТЯН ШАВАРШ ХАЧИКОВИЧ

ИСТОРИОГРАФИЧЕСКАЯ ЦЕННОСТЬ АРМЯНСКОЙ АГИОГРАФИЧЕСКОЙ ЛИТЕРАТУРЫ V-VIII ВЕКОВ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.05 «Историография, источниковедение»

Защита состоится 17 декабря 2021 г., в 14^{00} на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4)

РЕЗЮМЕ

В раннесредневековый период армянской истории произошло ряд судьбоносных событий: принятие христианства как государственной религии, падение Армянского царства и установление господства Сасанидского Ирана, опустошительные походы арабов, в результате которых резко ухудшилось положение Армении. Несмотря на это культурная и политическая элита страны сумела соответственным образом ответить на данные вызовы. Борьба армянского народа за сохранение культурных ценностей, возглавляемая духовенством, главным образом исходила из постулатов Библии, а в дальнейшем также из ряда сочинений богословского характера. К религиозно-богословской сфере относятся также агиографические сочинения.

Исследователям этой области следует бережно относиться к агиографическим трудам, а именно, приведенные в них данные необходимо сравнивать с иными источниками, датируемыми тем же историческим периодом, и лишь после выявления различий и совпадений можно говорить об их историографической ценности.

Для настоящего исследования были выбраны менее изученные арменоведами агиографические сочинения, в которых не так много гиперболизации, но зато они богаты историографическими фактами.

Нами учтены также хронологические границы – были выбраны сочинения, освещающие события от начала установления христианства в Армении до арабских походов (агиографические легенды Эдесского царя Абгара и считающихся учениками апостола Фаддея Воскянов, связанные с вышеупомянутыми мартирологи Сукиасянов и Шушаник и Изтбузита, отражающие события периода господства Сасанидского Ирана в Армении, а также мартиролог Давида Двнеци, относящийся к первым арабским походам). Нами были изучены также известные сочинения золотого века, ряд ассирийских, греческих и грузинских агиографических трудов,

сборников и т.д. В агиографической литературе исторические факты часто бывают представлены в завуалированном виде. Нередко приходится обращаться к раннесредневековому искусству, к теологии, этнографии и археологии, дабы посредством комплексного исследования выявить тот или иной феномен, иначе говоря, необходимо руководствоваться историко-сравнительным методом, равно как и принципом – от частного к общему.

Можем констатировать, что ранние агиографические сочинения содержат богатый источниковедческий материал по истории первых христианских общин Армении, военно-политической истории Армении и соседних с ней стран, а также по истории экономики и культуры Армении. Из этих сочинений мы черпаем сведения о мышлении средневекового человека, его воображении и психологии. При этом выявляются интересные параллели между святыми и другими раннесредневековыми образами – пустынниками, языческими богами, отважными воинами, колдунами и иными героями.

AZATYAN SHAVARSH KHACHIK

THE HISTORICAL VALUE OF THE ARMENIAN HAGIOGRAPHIC LITERATURE OF THE 5TH-8TH CENTURIES

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "Historiography and Source Study" 07.00.05

The defense of the dissertation will be held on 17 December 2021, 14^{00} at the session of the Specialized Council 004 on Armenian History of SCC RA operating at the Institute of History NAS RA (address: 0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4).

SUMMARY

A number of decisive events took place in the early medieval period of Armenian history: the adoption of Christianity as the state religion, the fall of the Armenian Kingdom and the establishment of the rule of Sasanian Iran, the destructive Arab campaigns and the consequent deterioration of the situation in Armenia. Despite all this, the country's cultural and political elites were able to find appropriate solutions to the challenges.

The cultural struggle of the Armenian people, which was led by the clergy, relied heavily on the Holy Scriptures, and then on separate theological treatises. Hagiographic works were in the field of religious-confessional struggle. Such a reality forces researchers to approach the hagiographic works with caution, to compare the data contained therein with other contemporary sources, and only after revealing the differences and coincidences, to speak about their historical value.

Such hagiographic works have been selected for the present study that have appeared less in the purview of Armenologists, in which there are few exaggerations and rich historical information. We have also taken into account the chronological boundaries: the works elucidating the origination of Christianity in Armenia and the Arab invasions were selected (the hagiographic legends of King Abgar of Edessa, as well as of the Voskians, considered to be the disciples of Apostle Thaddeus, the martyrology of the Sukiasyans linked to the latter, the martyrologies of Shushanik and Hiztbuzit reflecting the times of the Sasanian rule in Armenia, the martyrology of David Dvnetsi referring to the first years of the Arab invasions). Meanwhile, we have referred to the famous works of the Golden Age, a number of Assyrian, Greek and Georgian hagiographic works, collections, etc.

Historical information in hagiographic works is often manifested in disguise. It is often necessary to take a broader look, to turn to the help of early medieval art, theology, ethnography and archaeology,

and to discover this or that phenomenon through a comprehensive study, in other words, to be guided by the historical-comparative method, as well as by the principle from the particular to the general.

We can state that the hagiographic works of the early period contained rich source material on the activities of the first Christian communities in Armenia, the military-political, economic, cultural history of Armenia and neighboring countries. Thanks to these works we gather information about the mentality, imagination and psychology of medieval man. Interesting parallels are revealed between the attributes of saints and other early medieval characters – hermits, pagan gods, brave soldiers, witches and other heroes.